



*Գործարար շահերի պաշտպանության ցանցը անց կացրեց աշխատանքային քննարկում  
ԱԳՕ առաջնահերթությունների ձևավորման վերաբերյալ*

Ս.թ. հոկտեմբերի 19–ին Գործարար շահերի պաշտպանության ցանցը անց կացրեց աշխատանքային քննարկում նվիրված Ազգային գործարար օրակարգի առաջնահերթությունների ձևավորմանը: Միջոցառմանը մասնակցեց նաև Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի խորհրդատու Կարմեն Ստանիլան, որը մասնակիցներին հանգամանորեն ներկայացրեց Ազգային գործարար օրակարգի առաջնահերթությունների ընտրության մեթոդաբանությունն ու նմանատիպ միջազգային փորձը այլ երկրներում:

Քննարկումների ընթացքում ԳՇՊՑ ներկայացուցիչները արտահայտեցին իրենց տեսակետներն ու կարծիքները ներկայացված հարցերի վերաբերյալ և առաջարկեցին իրենց տեսանկյունից առավել կարևոր հանդիսացող խնդիրները և դրանց վերաբերյալ համապատասխան լուծումներ: ԳՇՊՑ-ի անդամները նախանշեցին երեք հիմնական առաջնահերթություն /հարկային վարչարարություն, տեսչական համակարգի կատարելագործում և ՓՄՁ քաղաքականության բարեփոխում/ և ձևավորեցին համապատասխան աշխատանքային խմբեր, որոնք էլ կգրառվեն տվյալ առաջնահերթությունների առավել խորը ուսումնասիրությամբ և խնդիրների և առաջարկությունների ձևակերպմամբ: Քննարկումների արդյունքում ձևավորված աշխատանքային խմբերը բարձրացված հարցերի վերաբերյալ կմշակեն և կներկայացնեն համապատասխան փաթեթներ, որոնք հետագայում կվերլուծվեն ԳՇՊՑ-ի քարտուղարության կողմից կողմից և հաշվի կառնվի ԱԳՕ-ի մշակման գործընթացի շրջանակներում:

